## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
### ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 26.12.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-01» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «07» փետրվարի 2020թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ջանյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 26.12.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-01» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը և Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17

Հ/Հ՝ 900011192151

ՀՎՀՀ՝ 02583241

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

***<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ***

Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4

ՀՀ՝ 2050422209671001

ՀՎՀՀ՝ 02584897

<<Ինեկոբանկ>> ՓԲԸ

Տնօրեն Ա. Ջանյան

/ստորագրություն/

Կ.Տ

**Հավելված N 1**
**« 07 » փետրվարի 2020թ. կնքված N 1 համաձայնագրի**

*(Հավելված N 2*
*« 26 » դեկտեմբերի 2019 թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46-01» ծածկագրով պայմանագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30197622/504 | Թուղթ, A4 ձևաչափի | - | - | - | - | - | - | - | - | - | - | 5940000 | **5940000** |
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | |
| 1 | 30197622/2 | Թուղթ, A4 ձևաչափի | 2019600 | 2019600 | 10434600 | 10434600 | 10434600 | 18849600 | 18849600 | 18849600 | 33660000 | 33660000 | 33660000 | **33660000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15,17
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***<<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պ. 16 Ա, 4
ՀՀ՝ 2050422209671001
ՀՎՀՀ՝ 02584897
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ

Տնօրեն Ա. Զանյան
/ստորագրություն/
Կ.Տ